ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1935—1936)

ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Մեր երկրում գիտության զարգացման ու գիտական հետազոտությունների կազմակերպման գործում ակնառու դեր ունի ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան։ Սովետական գիտության պատմության պայծառ էջերից է ՍՍՀՄ ԳԱ մասնաճյուղերի և բազաների ստեղծումը։ 1925 թ. ԳԱ վերափոխումը համամիութենական գիտական կենտրոնի՝ նրա առջև դրեց երկրի ողջ տարածքում ծավալուն գիտական շինարարության խնդիրը։ 1920-ական թվականների կեսերից լայն թափ ստացավ Միության առանձին ռեգիոնների հետազոտման նպատակով ԳԱ կոմպլեքսային գիտարշավախմբերի գործունեությունը։ Ազգային հանրապետություններում գիտական աշխատանքների կոորդինացման նպատակով 1926 թ. ստեղծվեց միութենական և ինքնավար հանրապետությունների ուսումնասիրման հատուկ կոմիտե, որը երկու տարի անց փոխակերպվեց արշավախմբային ուսումնասիրությունների հանձնաժողովի[1]։

Սոցիալիստական շինարարության հետագա տարիներին երկրի վերակառուցման գործում գիտության դերի է՛լ ավելի ուժեղացումը համառորեն պահանջում էր տեղերում մշտական գիտական հաստատությունների կազմակերպում և որակյալ գիտական կադրերի ապահովում։ Կոմունիստական կուսակցությունն ու սովետական կառավարությունը քաջ գիտակցում էին, որ ազգային հանրապետություններում տնտեսական և մշակութային զարգացման պրոբլեմների լուծումը սերտորեն կապված է գիտահետազոտական նոր կենտրոնների կազմակերպման հետ։ Մինչև 1930-ական թվականների սկիզբը ՍՍՀՄ ԳԱ գրեթե բոլոր հիմնարկները (բացառությամբ կովկասագիտության ինստիտուտի և մի շարք փորձարարական ու ռեգիոնալ կայանների) կենտրոնացված էին Մոսկվայում և Լենինգրադում։ Հենց այդ ժամանակ միութենական որոշ հանրապետությունների, երկրամասերի և մարզերի կուսակցական ու սովետական մարմինները քանիցս դիմեցին ՍՍՀՄ ԳԱ նախագահությանը՝ տեղերում ակադեմիական հիմնարկներ ստեղծելու առաջարկություններով։ Այդ նպատակով 1931 թ. հոկտեմբերի 6-ին կազմակերպվեց ՍՍՀՄ ԳԱ բազաների հանձնաժողով՝ ԳԱ փոխպրեզիդենտ Վ. Կոմարովի գլխավորությամբ. հանձնաժողովը տեղական ղեկավար մարմինների աջակցությամբ ակտիվ գործունեություն ծավալեց ազգային շրջաններում ակադեմիական հաստատությունների ճյուղավորված ցանցի ստեղծման ուղղությամբ[2]։ Մինչև 1932 թ. կեսերը կազմակերպվեցին ԳԱ հեռավորարևելյան, անդրկովկասյան և ուրալյան մասնաճյուղերը, ղազախական և տաջիկական բազաները։ Դեռևս 1931 թ. նոյեմբերի 20-ին ՍՍՀՄ ԳԱ նախագահությունը որոշում ընդունեց կովկասագիտության ինստիտուտի հիման վրա Անդրկովկասում գիտական կենտրոն ստեղծելու մասին[3]։ Այդ ինստիտուտում կազմակերպվեց բնական գիտությունների սեկտոր։

---

[1] «Материалы к истории Академии наук СССР за советские годы (1917—1947)», М.—Л., 1950, с. 59.

[2] А. В. Кольцов, Развитие Академии наук как высшего научного учреждения СССР. 1926—1932, Л., 1982, с. 217—221.

[3] «Организация советской науки в 1926—1932 гг. Сборник документов», Л., 1974, с. 181—182.

Շուտով, 1932 թ. նոյեմբերի 25-ին, ընդունվեց ԱՍՖՍՀ ԺողԿոմխորհի որոշումը «ՍՍՀՄ ԳԱ կովկասագիտության ինստիտուտը ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի վերափոխելու մասին»[4]։ Սկզբում ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղը (Զակֆան) բաղկացած էր երկու բաժանմունքներից՝ ադրբեջանական և վրացական։ Վերջիններս զբաղվում էին նաև Սովետական Հայաստանի բնական հարստությունների, պատմության և մշակույթի ուսումնասիրության մի շարք պրոբլեմներով։

Անդրկովկասի կուսակցական և կառավարական մարմինները մշտապես հոգ էին տանում ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման, նրա նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ։ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի և ԱՍՖՍՀ ԺողԿոմխորհի նիստերում քննարկվում էին մասնաճյուղի գիտական հիմնարկները որակյալ կադրերով, համապատասխան սարքավորումներով ապահովելու հետ կապված հարցեր, անհրաժեշտ միջոցներ էին տրամադրվում գիտական նոր ստորաբաժանումներ կազմակերպելու համար։

Զակֆանը մեծ դեր խաղաց Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում գիտական մտքի նոր կենտրոններ ձևավորելու գործում։ 1935 թ. հուլիսին այդ մասնաճյուղի հիման վրա ստեղծվեցին երեք առանձին ակադեմիական ստորաբաժանումներ՝ ՍՍՀՄ ԳԱ ադրբեջանական, վրացական և հայկական մասնաճյուղերը։

1930-ական թվականների կեսին Հայաստանի ժողովրդական տնտեսության սրընթաց զարգացումը օրակարգում դրեց արտադրողական ուժերի կոմպլեքսային ուսումնասիրության և ինտենսիվ զարգացման, հետազոտությունների զգալի ընդլայնման ու խորացման խնդիրները։ Հանրապետության էկոնոմիկայի և մշակույթի բազմակողմանի զարգացման նպատակով կոմունիստական կուսակցության առաջադրած այդ հիմնական խնդիրները լուծելու համար անհրաժեշտ էր մեծ գիտական կենտրոն, որն ընդունակ կլիներ միավորելու տարբեր բնագավառների գիտնականներին։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և ՀՍՍՀ ԺողԿոմխորհի նախաձեռնությամբ, ՍՍՀՄ ԳԱ աջակցությամբ 1935 թ. սկզբին կազմակերպվեց ԿԱ անդրկովկասյան մասնաճյուղի հայկական բաժանմունքը։ Դեռևս 1934 թ. օգոստոսի 7-ին կայացած ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի նիստում որոշում էր ընդունվել «Հայաստանում ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի բաժանմունք ստեղծելու մասին»[5]։ Որոշմամբ Կենտկոմի կուլտուրայի և պրոպագանդայի բաժնին լուսժողկոմատի, հողժողկոմատի և ծանրարդժողկոմատի լիազորության հետ համատեղ առաջարկվում էր տասնօրյա ժամկետում հաստատել Զակֆանի հայկական բաժանմունքին հանձնվող գիտահետազոտական հիմնարկների ցանկը, ճշտել բաժանմունքի կառուցվածքը (խմբեր, բաժիններ, սեկտորներ), Կենտկոմի հաստատմանը ներկայացնել հայկական բաժանմունքի նախագահության կազմը, վերանայել բաժանմունքին փոխանցվող հիմնարկների ղեկավար կազմը և դրանք ամրապնդել գիտական նոր կադրերով[6]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1935 թ. հունվարի 22-ի նիստում քննարկվեցին Զակֆանի հայկական բաժանմունքի բացման հետ կապված կազմակերպական հարցեր և ընդունվեց համապատասխան որոշում[7]։

1934 թ. հոկտեմբերին ՀՍՍՀ լուսավորության ժողկոմ Ա. Եղիազարյանի գլխավորած հատուկ հանձնաժողովին հանձնարարվեց մինչև տարվա վերջը կազմել բնական գիտությունների բաժնի աշխատանքների պլանը և նախապատրաստական աշխատանքներ ծավալել մինչև տարվա վերջ գիտության այլ ճյուղերի գծով բաժիններ ստեղծելու ուղղությամբ[8]։

---

4 «Заря Востока», 3. XII. 1932.

5 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսարխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 22, գ. 24, թ. 26։

6 Նույն տեղում։

7 Նույն տեղում, ց. 23, գ. 9, թ. 52—52 շրջ.։

8 «Коммунист», 15. X. 1934.

1935 թ. փետրվարի 1-ին, Հայաստանի բնական արտադրողական ուժերի բնագավառում գիտահետազոտական աշխատանքներն ուժեղացնելու նպատակով, ՀՍՍՀ Ժողկոմխորհը որոշում ընդունեց «ՀՍՍՀ-ում ՍՍՀՄ ԳԱ անդրկովկասյան մասնաճյուղի բաժանմունք հիմնադրելու մասին»[9], որով նախատեսվում էր առաջին հերթին բնական և տեխնիկական գիտությունների զարգացումը։ Բաժանմունքի կազմի մեջ մտան երկրաբանական, քիմիական, կենսաբանական ինստիտուտները և գեոֆիզիկական սեկտորը՝ համապատասխան ստորաբաժանումներով։ Շուտով, 1935 թ. մայիսի 25-ից մինչև հունիսի 1-ը տեղի ունեցած ՍՍՀՄ ԳԱ ընդհանուր ժողովի նստաշրջանը որոշեց Զտկֆանի հայկական բաժանմունքը վերակազմել ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի (Արմֆան)[10]։ Հայաստանի կոմկուսն ու կառավարությունը Արմֆանի առջև դրեցին հետևյալ խնդիրները՝ հայտնաբերել և ուսումնասիրել հանրապետության բնական հարստությունները, ըստ ամենայնի օժանդակել ժողովրդական տնտեսության մեջ դրանց արագ և ռացիոնալ օգտագործմանը, ամեն կերպ նպաստել Հայաստանի արտադրողական ուժերի զարգացմանը, մարքսիստական դիրքերից ուսումնասիրել հայ ժողովրդի հարուստ պատմությունն ու մշակույթը, մշակել սովետական ժամանակաշրջանի կուլտուրական շինարարության հարցերը, հրատարակել գրական ժառանգությունը, պատրաստել գիտական կադրեր և բարձրացնել նրանց որակավորումը, մասնաճյուղի աշխատակիցների բեղմնավոր գիտական գործունեության համար ստեղծել անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և այլն։

Սկզբնական շրջանում Արմֆանի մեջ մտան նախկինում եղած հետևյալ գիտահետազոտական հիմնարկները՝ երկրաբանական թանգարանը, բնապատմական թանգարանը, հողագիտական լաբորատորիան, պոլիտեխնիկական ինստիտուտի օրգանական քիմիայի լաբորատորիան, բժշկական ինստիտուտի կենսաքիմիայի լաբորատորիան, էջմիածնի արխիվային գրադարանի, ձեռագրերի և նյութական մշակույթի հնագույն հուշարձանների ուսումնասիրման խումբը[11]։ Արմֆանի կառուցվածքը 1935 թ. կեսերին ուներ հետևյալ պատկերը. երկրաբանական ինստիտուտ՝ երկրաբանության, քարաբանության և ջրաերկրաբանության սեկտորներով. քիմիական ինստիտուտ՝ ընդհանուր քիմիայի, օրգանական քիմիայի, ֆիզիկական քիմիայի և կենսաքիմիայի սեկտորներով. կենսաբանական ինստիտուտ՝ բուսաբանության, կենդանաբանության և բույսերի գենետիկայի սեկտորներով. հողագիտության սեկտոր. պատմության, հնագիտության և ազգագրության սեկտոր[12]։ 1935 թ. աշնանը ստեղծվեց բուսաբանական այգին, իսկ 1936 թ. մարտի վերջին՝ կենսաբանական ինստիտուտի մանրէաբանության սեկտորը[13]։ 1936 թ. սկզբին Արմֆանի համակարգում ընդգրկվեց Սևանի ջրակենսաբանական կայանը[14]։ Մասնաճյուղի նախագահությանը կից գործում էին գիտարշավային հետազոտությունների բյուրոն, հրատարակչական հանձնաժողովը և կենտրոնական գրադարանը[15]։

Արմֆանի առաջին նախագահ դարձավ խոշոր գիտնական-երկրաբան, ակադեմիկոս Ֆ. Լևինսոն-Լեսինգը։ Մասնաճյուղի գիտական հիմնարկները գլխավորեցին նշանավոր գիտնականներ Հ. Կարապետյանը (երկրաբանական ինստիտուտ), Հ. Հովհաննիսյանը (քիմիական ինստիտուտ), Ս. Յուզբաշյանը (կենսաբանական ինստիտուտ), Ս. Տեր-Ավետիսյանը (պատմության, հնագիտության և ազգագրության սեկտոր), Ա. Բենինգը (Սևանի ջրակենսաբանա-

---

9 Նույն տեղում, 6. II. 1935։

10 «Материалы к истории Академии наук СССР за советские годы», с. 143.

11 ՀՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1—1935, գ. 10, թ. 4, К. С. Худавердян, Культурная революция в Советской Армении. 1920—1940, Ереван, 1966, с. 218.

12 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 23, գ. 293, թ. 28։

13 ՀՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1—1936, գ. 7, թ. 16։

14 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 23, գ. 281, թ. 57։

15 ՀՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1—1936, գ. 3, թ. 2—3։

կան կայան) և ուրիշներ։ Մասնաճյուղի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին անվանի գիտնականներ բանասերներ Մ. Աբեղյանը, Հ. Աճառյանը, պատմաբան Հ. Մանանդյանը, քիմիկոսներ Ս. Ղամբարյանը, Լ. Ռոտինյանը, գյուղատնտես-կենսաբաններ Մ. Թոմանյանը, Պ. Քալանթարյանը, ինչպես նաև մի խումբ ռուս գիտնականներ՝ գենետիկ Ն. Վավիլովը, բուսաբաններ Ա. Տրոիցկին, Դ. Սոսնովսկին, Ն. Խոլոդնին, պատմաբան Կ. Տրևերը և ուրիշներ։

1935 թ. հուլիսի 14-ին Երևանում՝ մշակույթի տանը, տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի բացմանն ու ակադեմիկոս Ֆ. Լևինսոն-Լեսինգի մեծարմանը՝ նրա գիտական և հասարակական գործունեության 50-ամյակի առթիվ[16]։ ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահությունը, բարձր գնահատելով Հայաստանի արտադրողական ուժերի ուսումնասիրման գործում Ֆ. Լևինսոն-Լեսինգի ակնառու գիտական ծառայությունները, նրան պարգևատրեց Կենտգործկոմի պատվոգրով[17]։ ՍՍՀՄ ԳԱ նախագահության 1935 թ. հոկտեմբերի 25-ի որոշմամբ հաստատվեց Արմֆանի նախագահության (8 հոգի) և գիտական խորհրդի (44 հոգի) կազմը։ Վերջինիս մեջ մտան սովետական մի շարք խոշոր գիտնականներ՝ ակադեմիկոսներ Ա. Բախը, Ն. Վավիլովը, Վ. Վոլգինը, Ն. Զելինսկին, Ս. Զեռնովը, Բ. Կելլերը, Վ. Կիստյակովսկին, Վ. Կոմարովը, Ն. Կուռնակովը, Հ. Օրբելին[18]։

Հայաստանի գիտական կենտրոնի կազմավորման գործում հսկայական դեր խաղաց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան։ Նրա նախագահության նախաձեռնությամբ լայնորեն կիրառվում էր ԳԱ անդամների այցելությունը հանրապետություն՝ կոնկրետ օգնություն ցույց տալու և գիտահետազոտական աշխատանքները կոորդինացնելու, հետազոտությունների հիմնական ուղղություններն ու թեմատիկան որոշելու, գիտական նոր ստորաբաժանումներ կազմակերպելու նպատակով։ Այսպես, դեռևս 1935 թ. ապրիլին Երևան ժամանեց ականավոր գիտնական, ակադեմիկոս Ն. Վավիլովը, որը համաձայնվել էր իրականացնել Արմֆանի կենսաբանական ինստիտուտի ընդհանուր գիտական ղեկավարումը[19]։ Հայաստան կատարած Ն. Վավիլովի այցի հիմնական նպատակն էր կենսաբանական ինստիտուտի, ինչպես նաև բուսաբանական այգու կազմակերպմանը մասնակցելը։ Դրա հետ մեկտեղ նա ծանոթացավ գյուղատնտեսության բնագավառում տարվող գիտահետազոտական աշխատանքներին։ Ն. Վավիլովին ընդունեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանը, ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ա. Գուլոյանը և հողագործության ժողկոմ Վ. Մամիկոնյանը։ Զրույցների ընթացքում նշվեց Երևանում բուսաբանական մեծ այգի ստեղծելու անհրաժեշտությունը, որը հետագայում հիմք կծառայեր հանրապետության կանաչապատման համար։ Բուսաբանական այգու կազմակերպման մտահղացումը ջերմ հավանության արժանացավ Հայաստանի կուսակցական և սովետական մարմինների, մասնավորապես Երևանի քաղաքային սովետի կողմից, որն էլ իր վրա վերցրեց այգու ֆինանսավորման աշխատանքները։ Բույսերի տեսակների ընտրության և տնկումների պլանի մշակմանը պետք է մասնակցեին Անդրկովկասի բոլոր խոշոր բուսաբանները[20]։

Արմֆանի աշխատանքներին ծանոթանալու համար 1935 թ. օգոստոսի վերջին Երևան ժամանեց ՍՍՀՄ ԳԱ մշտական քարտուղար, ակադեմիկոս Վ. Վոլգինը։ «Կոմունիստ» թերթի թղթակցի հետ ունեցած զրույցում նա ասել է, որ «հայկական մասնաճյուղը գիտությունների ակադեմիայի մասնաճյուղերից ամենաերիտասարդն է և այդ իսկ պատճառով այն հատուկ ուշադրություն է

16 «Խորհրդային Հայաստան», 15. VII. 1935։

17 «Коммунист», 17. VII. 1935.

18 ՀՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1—1935, գ. 1, թ. 3—9։

19 1930-ական թվականների երկրորդ կեսին—1930-ական թվականների սկզբին Ն. Վավիլովը մի քանի անգամ այցելել է Հայաստան, սերտ կապեր հաստատելով հանրապետության գիտական օջախների հետ։

20 «Коммунист», 17. IV. 1935.

պահանջում։ Հայաստանի բնական ռեսուրսները, նրա սոցիալիստական շինարարությունը, նրա պատմական հուշարձանները՝ այս բոլորը պահանջում են գիտական մտքի լարում... Հայաստանը իր գեոմորֆիկ և կլիմայական պայմաններով մի երկիր է, որն արտակարգ բարենպաստ է բուսաբանության բնագավառում զանազան գիտափորձեր կատարելու համար»[21]։

Արմֆանի հետագա աշխատանքների աշխուժացման գործում մեծ նշանակություն ունեցավ նաև ՍՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ Վ. Կոմարովի այցելությունը Հայաստան։ Նա մանրամասն ծանոթացավ մասնաճյուղի հիմնարկների գործունեությանը և մի շարք արժեքավոր ցուցումներ տվեց երիտասարդ գիտական կենտրոնին։ Մասնավորապես, Վ. Կոմարովը մատնանշեց արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտի ղեկավարների, հասարակայնության լայն շրջանների հետ գիտական առավել սերտ կապեր հաստատելու անհրաժեշտությունը՝ պարբերաբար առանձին պրոբլեմներին նվիրված գիտական կոնֆերանսներ կազմակերպելու միջոցով[22]։

Արմֆանի կազմավորման ժամանակ նրա գիտահետազոտական հիմնարկներում աշխատում էին 73 հոգի՝ 2 ակադեմիկոս, ինստիտուտների 12 իսկական անդամ, 26 ավագ և 33 կրտսեր գիտաշխատողներ։ Բացի այդ, պայմանագրով ներգրավվեց ևս 19 գիտաշխատող[23]։ 1935—1936 թթ. մասնաճյուղի ասպիրանտուրայում սովորում էին 24 հոգի[24]։

Համառոտակի կանգ առնենք Արմֆանի հիմնարկներում 1935—1936 թթ. մշակված գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղությունների վրա։

Երկրաբանական ինստիտուտը զբաղվում էր Հայաստանի երկրաբանական կառուցվածքի, երկրաբանության տեսանկյունով նրա արտադրողական ուժերի սիստեմատիկ ուսումնասիրությամբ, հանրապետության երկրաբանական մանրամասն քարտեզի կազմմամբ, օգտակար հանածոների հանքավայրերի տեղաբաշխման օրինաչափությունների և գիտագործնական նշանակություն ունեցող նոր հանքավայրերի հայտնաբերմամբ ու հետազոտմամբ, ինչպես նաև ջրաերկրաբանության, ՀՍՍՀ ջրային ռեսուրսների կոմպլեքսային օգտագործման ռացիոնալ ուղիների բացահայտման, Հայաստանի բնական շինանյութերի հետախուզման և ուսումնասիրման աշխատանքներով[25]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀՍՍՀ Ժողկոմխորհի առաջադրանքով ինստիտուտը կատարեց մի շարք աշխատանքներ Փիրդովդանի (այժմ՝ Քաջարան) համամիութենական նշանակություն ունեցող պղնձամոլիբդենային հանքավայրի գնահատման և արդյունաբերական յուրացման գործում[26]։

Կենսաբանական ինստիտուտը հիմնականում զբաղվում էր ձևագոյացման, տեսակների ծագման, էվոլյուցիայի և գենետիկայի, Հայաստանի ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրման հարցերով։ Ակադեմիկոս Ն. Վավիլովի պատկերավոր արտահայտությամբ՝ Հայաստանը բուսական աշխարհի «արարման հնոց» է[27]։ Բույսերի բազմաթիվ տեսակներ, որոնք այլ վայրերում միատեսակ են, այստեղ ներկայացված են մեկը մյուսին անցնող ձևերի բազմազանությամբ։ Անդրկովկասի բույսերի ավելի քան 600 տեսակների կեսից ավելին աճում է Հայաստանում։ Ինստիտուտի թեմատիկ պլանը սերտորեն կապված էր հանրապետության գյուղատնտեսական արտադրության խնդիրների

---

21 Նույն տեղում, 29. VIII. 1935։

22 Նույն տեղում, 5. XI. 1935։

23 ՀՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1—1936, գ. 3, թ. 3։

24 «Научный отчет Армянского филиала Академии наук СССР за 1939 год», Ереван, 1940, с. 13, 15.

25 «Коммунист», 29. VI. 1935; К. Паффенгольц, Успехи геологии Советской Армении за 20 лет («Научный сборник, посвященный 20-летию установления Советской власти в Армении», Ереван, 1941, с. 362—376).

26 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 24, գ. 344, թ. 45։

27 «Коммунист», 14. VII. 1935.

հետ[28]։ Մեծ աշխատանք կատարեց ինստիտուտի գենետիկայի սեկտորը (ղեկավար՝ Վ. Գուլքանյան, հետագայում ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս) հացահատիկի միջտեսակային հիբրիդիզացման ժամանակ իմունիտետի ուսումնասիրման ուղղությամբ՝ տնտեսապես արժեքավոր տեսակների ստացման նպատակով։ Փորձնական տեղամասում կատարված խաչասերումների շնորհիվ ստացվեցին ավելի քան 3000 հիբրիդային հատիկներ, ընդ որում իբրև ծնողական զույգեր օգտագործվեցին տեղական հացահատիկների բազմաթիվ տեսակներ[29]։ Բուսաբանության սեկտորի գիտաշխատող Ա. Թախտաջյանի (այժմ՝ ՍՍՀՄ և ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս) կողմից Հայաստանի մի շարք շրջանների լեռնաքսերոֆիլային բուսականության ուսումնասիրությունը հնարավորություն տվեց որոշելու այդ յուրահատուկ ֆորմացիաների ֆլորեիստական կազմն ու էկոլոգիական առանձնահատկությունները[30]։

Բուսաբանական այգու հիմնական խնդիրներն էին՝ Հայաստանի լորային շրջանների կանաչապատումը, համանման երկրների մի շարք էկզոտիկ տեսակների կլիմայավարժումը, Հայաստանի բնական բուսական ռեսուրսների ուսումնասիրումը, կենդանի բնության մեջ տեսակագոյացման և ձևագոյացման պրոցեսների ուսումնասիրումը[31]։ 1936 թ. աշխատանքներ կատարվեցին էկոլոգիական լաբորատորիա կազմակերպելու ուղղությամբ, ինչպես նաև կառուցվեց ու սարքավորվեց այգուն կից օդերևութաբանական կայանը, որը ձեռնամուխ եղավ մշտական դիտարկումներ կատարելուն։ Բուսաբանական այգու աշխատակիցները մշակեցին հետևյալ թեմաները. պրոֆեսոր Դ. Սոսնովսկին և Ե. Ղազարյանը իրագործեցին այգու բնաշխարհի նախնական հետախուզումը, գիտաշխատող Պ. Յարոշենկոն իրականացրեց այգու Կիրովականի բաժանմունքի բուսական ծածկույթի հետազոտումը և ներկայացրեց ավարտուն աշխատանք, գիտաշխատող Ա. Ֆեդինը ավարտում էր դեռևս 1934 թ. Բաթումում սկսած «Խոնավության և ջերմաստիճանի ազդեցությունը ցիտրուսների, մասնավորապես կիտրոնի աճի և ցրտադիմացկունության վրա» թեմայով աշխատանքը[32]։

Սևանի ջրակենսաբանական կայանն ուսումնասիրում էր Սևանի, որպես հանրապետության հիմնական ձկնատնտեսական և էներգետիկ բազայի, ու այլ ջրավազանների ջրաբանության, ջրակենսաբանության և ձկնային տնտեսության հարցերը։ Կայանը ձեռնամուխ եղավ մինչ այդ դեռևս չուսումնասիրված պլանկտոնի ուսումնասիրմանը։ Բացի այդ, այն շարունակում էր ձկների հումքային պաշարների դիտարկումը, հետազոտում էր իշխանի մանրաձկան և լոճում կլիմայավարժեցված սիգի կենսաբանությունը։ Մասամբ կատարվեց ՀՍՍՀ Ժողկոմխորհի որոշմամբ 1936 թ. հուլիսի վերջին կայանին հանձնարարված ծածանի լճային տնտեսության կազմակերպման հետազոտական աշխատանքը, որի շնորհիվ հաջողվեց իրականացնել Հայաստանի լեռնային շրջանների մի շարք ջրավազանների հետազոտումը և որոշել ծածանի ոչ մեծ բուծարանի կառուցման վայրը, որը պետք է խթաներ Հայաստանի լեռնային կոլտնտեսություններում ձկնատնտեսության զարգացումը[33]։

Քիմիական ինստիտուտում մշակվում էին մի շարք թեմաներ, որոնք ունեին ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն։ Այսպես, «Ացետիլենի մետաղաօրգանական միացությունները» թեմայի փորձարարական արդյունքները մեծ նշանակություն ունեցան Երևանում սինթետիկ կաուչուկի գործարանի կառուցման համար[34]։

Հողագիտության սեկտորի հիմնական խնդիրն էր Հայաստանի հողային ծածկույթի հետազոտումը՝ գյուղատնտեսական արտադրության կարիքների

28 ՀՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1—1936, գ. 3, թ. 5—6։
29 Նույն տեղում, թ. 6։
30 Նույն տեղում։
31 Նույն տեղում, գ. 6, թ. 16։
32 Նույն տեղում, թ. 18, 21։
33 Նույն տեղում, թ. 22—23։
34 Նույն տեղում, թ. 1—3։

համար անհրաժեշտ հողային ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործման նպատակով։ 1936 թ. սեկտորում մշակվեց 8 թեմա, որոնց հեղինակներն էին Բ. Գալստյանը, Գ. Աղաջանյանը, Գ. Դեմուրյանը, Ա. Նալբանդյանը, Ա. Զրթ- չյանը[35]։ ՀՍՍՀ հողժողկոմատի առաջադրանքով սեկտորը 1935—1936 թթ. իրականացրեց Սարուխանի ենթաշրջանի դաշտավարության հատուկ ուսումնասիրությունը, որի նպատակն էր ենթաշրջանի կոլտնտեսություններում բերքատվության արագ և առավելագույն աճն ապահովող կոնկրետ ցանքաշրջանառություններ կազմելն ու միջոցառումների համակարգ մշակելը[36]։

Պատմության, հնագիտության և ազգագրության սեկտորը զբաղվում էր Հայաստանի պատմության և նյութական մշակույթի հուշարձանների (արխիվային նյութեր, ձեռագրեր, վիմագրություն ժողովրդական բանահյուսություն և այլն) ուսումնասիրությամբ։ 1936 թ. սեկտորը Պետական էրմիտաժի հետ կազմակերպեց միջնադարյան նշանավոր ամրոց Ամբերդի սիստեմատիկ պեղումները։ Դրանք անցկացվեցին երկու ամսվա ընթացքում՝ ակադեմիկոս Հ. Օրբելու անմիջական ղեկավարությամբ և տվեցին գոհացուցիչ արդյունքներ[37]։ Պեղվեց Պահլավունի իշխանների պալատի մի մասը և երկու սենյակներից բաղկացած բաղնիքը։ Հետախուզվեց կավե ու երկաթե խողովակներով անցկացված ջրմուղ ցանցը, ինչպես նաև ամրոցից դեպի գետն ընկած գաղտնուղին։ Գիտական նշանակություն ունեցող հայտնաբերված իրերի թիվը հասնում էր 530-ի, որոնց մեջ կային նաև հեռավոր երկրներից բերված առարկաներ։ 1936 թ. հոկտեմբերի 8-ին տեղի ունեցած Արմֆանի նախագահության նիստում ընդունված որոշման համաձայն Ամբերդի հնագիտական պեղումները պետք է շարունակվեին և ընդլայնվեին[38]։ Սեկտորի վարիչ Ս. Տեր-Ավետիսյանը և գիտաշխատող Ս. Տիգրանյանը մշակում էին «Հայկական առևտրական կապիտալի ծագումն ու զարգացումը» ընդհանուր թեմայի առանձին հարցերը։ Բացի այդ, սեկտորի աշխատակիցները Երևանի ու Էջմիածնի, շրջանների սահմաններում հավաքում և ուսումնասիրում էին երաժշտական ֆոլկլորը։ Տպագրության պատրաստվեցին Անդրկովկասի ժողովուրդների մեջ տարածված «Քյոռօղլի» էպոսի՝ 20 տարբերակներ, ինչպես նաև 1936 թ. տպագրության հանձնվեցին Զաքարիա Ագուլեցու «Օրագրությունն» ու Աբրահամ Երևանցու «Պատերազմների պատմությունը»[39]։

Արմֆանի գիտաշխատողների ակտիվ մասնակցությամբ շարունակվում էին «Անդրկովկասի աշխարհագրական բառարանի» կազմման աշխատանքները։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի որոշմամբ 1935 թ. ապրիլի 8-ին մի շարք կազմակերպությունների և գիտական հիմնարկների ներկայացուցիչների մասնակցությամբ ստեղծվել էր հանձնաժողով՝ Հայաստանին վերաբերող բառարանի մասը կազմելու համար։ Այդ ամբողջ աշխատանքը կենտրոնացված էր սկզբում Զակֆանի հայկական բաժանմունքում, ապա՝ Արմֆանում[40]։

Այսպիսով, ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ստեղծումը ակնառու իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում։ Այն Սովետական Հայաստանում գիտության և մշակույթի անշեղ զարգացման նկատմամբ կոմունիստական կուսակցության ու սովետական պետության տածած ջերմ հոգատարության վառ դրսևորում էր։ Արմֆանի կազմակերպման ընթացքում ծագեցին ոչ քիչ դժվարություններ, սակայն հանրապետության գիտնականները Հայաստանի կոմկուսի և կառավարության ղեկավարությամբ հաջողությամբ հաղթահարեցին դրանք, պատվով կատարելով իրենց առջև դրված խնդիրները։

---

35 Մանրամասն տե՛ս նույն տեղում, թ. 26, ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 24, գ. 344, թ. 72—75։

36 «Труды Армянского филиала Академии наук СССР: Научно-популярная серия», вып. I, Ереван, 1937, с. 5.

37 «Գիտությունը Հայաստանում 50 տարում», Երևան, 1973, էջ 53։

38 ՀՍՍՀ ԳԱ արխիվ, ֆ. 1, ց. 1—1936, գ. 7, թ. 44, 45։

39 Նույն տեղում, գ. 6, թ. 32։

40 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 23, գ. 11, թ. 294։

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОГО ФИЛИАЛА АКАДЕМИИ НАУК СССР (1935—1936)

СТЕПАН ГАРИБДЖАНЯН

Резюме

Бурное развитие народного хозяйства Советской Армении в первой половине 30-х годов ставило на повестку дня задачу значительного расширения и углубления исследований, комплексного изучения и интенсивного развития производительных сил республики. Необходим был крупный научный центр, способный объединить ученых различного профиля, мобилизовать их на решение этой основной задачи, поставленной Коммунистической партией. Им стал созданный в июле 1935 года Армянский филиал АН СССР (АрмФАН), объединивший большую часть имевшихся в республике научно-исследовательских учреждений в области естественных и гуманитарных наук. Создание филиала АН в Армении явилось большим событием в научной и культурной жизни армянокого народа, фактом конкретной реализации ленинокой национальной политики партии.

Руководствуясь указаниями ЦК Компартии Армении и правительства республики, институты и секторы АрмФАНа сосредоточили свое внимание на изучении природных богатств Советской Армении, на проблемах, выдвигаемых промышленностью и сельским хозяйством республики, вопросах истории, филологии, археологии, фольклористики Армении.